

# Մ Ա Ս Ի - Բ .

## Հ ա ր կ ա ր յ ո ջ ե տ ա յ ի ն ք ա ղ ա ք ա կ ա ն ո թ յ ո ն

### Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները

Հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների (եկամուտների, ծախսերի, հարկաբյուջետային դեֆիցիտի և պարտքերի) հրապարակումը արտացոլում է Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունը հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունը ապահովելու և այդ բնագավառում հեռահայաց մոտեցում կիրառելու առումով: Մասնավորապես, կառավարությունը հանձն է առնում համակշռել սոցիալական ծախսեր կատարելու անհրաժեշտությունը կայուն հարկաբյուջետային քաղաքականությունն ապահովելու անհրաժեշտության հետ՝ ժամանակի ընթացքում պարտքերի կուտակում թույլ չտալու նպատակով:

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը մշակել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ՝ ՄԺԾԾ-ի և պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում առաջնորդվելու համար: Դրանք հիմք կծառայեն ՀՀ կառավարության ընթացիկ քաղաքականությունների և երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

Երկարաժամկետ հեռանկարում նախատեսվում է, որ.

(i) 2002-2015 թթ. ՀՆԱ անվանական մեծությունը կաճի շուրջ 2.9 անգամ: Այդ պայմաններում կանխատեսվում է համախմբված բյուջեի հարկային եկամուտների 3.7 անգամ աճ: Ընդ որում, եկամուտների անվանական մեծության աճը զուգակցվելու է նաև ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության աճով՝ 2002 թ. փաստացի ձևավորված 19.7%-ից (2003-21.2%) մինչև 2015 թ. կանխատեսվող 23.9%-ը (կամ 1.3 տոկոսային կետով): Էական փոփոխությունների կենթարկվի եկամուտների կառուցվածքը՝ ըստ ստացման աղբյուրների: Մասնավորապես, արտաքին աղբյուրներից եկամուտների (պաշտոնական տրանսֆերտների) նվազման միտումը կզուգակցվի հարկային և ոչ հարկային եկամուտների աճով: Ներքին աղբյուրներից եկամուտների նման ավելացումը պայմանավորված է լինելու ինչպես տնտեսության կայուն աճի կանխատեսվող բարձր տեմպերով, այնպես էլ հարկային և մաքսային վարչարարության բարելավմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրագործմամբ:

(ii) Համախմբված բյուջեի եկամուտների աճին զուգահեռ, կավելանան համախմբված բյուջեի ծախսերը, որոնց մեծությունն անվանական արտահայտությամբ 2002-2015 թթ. կավելանա 2.9 անգամ: Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով պետական պարտքի կառավարման և բյուջեի դեֆիցիտի կարգավորման ան-

հրաժեշտությունը, ՀՆԱ-ի նկատմամբ բյուջետային ծախսերի հարաբերակցության ցուցանիշը էականորեն չի փոխվի և կմնա ՀՆԱ 25.0 - 25.5%-ի սահմաններում: Բյուջետային ծախսերին բնորոշ կլինի սոցիալական ուղղվածության խորացումը: Այդ մասին կվկայի, մասնավորապես, աշխատավարձի և սոցիալական բնույթ ունեցող տրանսֆերտային վճարների առաջանցիկ աճը բյուջետային այլ ծախսերի համեմատ:

(iii) Տեղի կունենա պետական պարտքի բեռի աստիճանական թեթևացում: Դրան զուգընթաց կնվազի պարտքի սպասարկման հետ կապված տոկոսագումարների վճարման տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերում (2015թ. այն կկազմի մինչև 2.7%):

(iv) Բյուջետային միջոցների հաշվին իրականացվող կապիտալ ծախսերի միջին մակարդակը 2005-2015 թթ. կպահպանվի ՀՆԱ-ի նկատմամբ շուրջ 4.0%-ի սահմաններում (դրանց նկատմամբ պահանջն առավել ընդգծված կլինի առաջիկա տարիներին): Կապիտալ ծախսերն իրենց ուղղվածությամբ և կառուցվածքով չեն փոխարինի համապատասխան մասնավոր ներդրումներին, այլ կլինեն փոխլրացնող: Դրանք հիմնականում կուղղվեն սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների վերականգնմանը և վերակառուցմանը:

(v) 2005-2015 թթ. ևս բյուջեի ձևավորումն ու կատարումը կընթանան բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում, դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Բյուջետային դեֆիցիտը մինչև 2015 թվականն աստիճանաբար կնվազի՝ ՀՆԱ-ի նկատմամբ մինչև 1.6%:

## Միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը

Կառավարությունը ընտրել է վերը ընդհանուր գծերով ներկայացված երկարաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները որպես հարկաբյուջետային քաղաքականության մշակման ուղղորդող սկզբունքներ:

Այնուհանդերձ, ՀՀ կառավարությունը ուղղորդվել է վերը նշված սկզբունքներով ինչպես 2005-2007թթ. ՄԺԾԾ-ում, այնպես էլ ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների և ծախսերի ազանավարությունը մշակելու ժամանակ:

Ստորև բերված աղյուսակ 1-ում ամփոփվում է ՀՀ կառավարության միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը արտացոլող ամփոփ ցուցանիշները:

*Աղյուսակ 1. 1 2003-2007թթ. հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները*

Ցուցանիշներ	2003թ. փաստացի	2004թ. ծրագիր	2005թ. նախագիծ	2006թ. կանխատեսում՝ ըստ 2005-2007թթ ՄԺԾԾ	2007թ. կանխատեսում՝ ըստ 2005-2007թթ ՄԺԾԾ
<i>Ա. արտահայտված մլրդ դրամով</i>					
1. Ընդամենը եկամուտներ	292.0	280.6	327.9	348.1	386.6
2. Ընդամենը ծախսեր	312.7	331.8	375.4	390.1	433.3
- ընթացիկ ծախսեր	222.3	248.8	289.9	312.7	345.6
- կապիտալ ծախսեր	83.8	71.7	73.7	64.1	72.6

- վարկավորում հանած մարում	6.6	11.3	11.8	13.3	15.1
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	20.7	51.2	47.5	43.0	46.7
4. Պետական պարտք (մլն ԱՄՆ \$-ով)	1173.9	1218.4	1280.6	1326.8	1389.4
- արտաքին պարտք	1097.7	1129.2	1172.2	1203.4	1247.3
- ներքին պարտք	76.2	89.2	108.4	123.4	142.1
<i>Բ արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով</i>					
1. Ընդամենը եկամուտներ	18.0	15.4	16.2	16.3	16.6
2. Ընդամենը ծախսեր	19.3	18.2	18.5	18.3	18.6
- ընթացիկ ծախսեր	13.7	13.6	14.3	14.7	14.8
- կապիտալ ծախսեր	5.2	3.9	3.6	3.0	3.1
- վարկավորում հանած մարում	0.4	0.7	0.6	0.6	0.7
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	1.3	2.8	2.34	2.0	2.0
4. Պետական պարտք	41.9	35.8	33.8	33.3	31.9
- արտաքին պարտք	39.3	33.1	30.9	30.2	28.7
- ներքին պարտք	2.6	2.6	2.9	3.1	3.3

## Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

Հիմք ընդունելով 2005 թվականի՝ ՀՆԱ **16.2%-ի** չափով կանխատեսված պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ **2.34 %-ի** չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից (որը 0.6 տոկոսային կետով պակաս է 2004 թվականի ծրագրային ցուցանիշից)՝ ՀՀ կառավարությունը ծրագրում է ապահովել ծախսերի մակարդակը ՀՆԱ **18.5%-ի** կամ **375.4 մլրդ դրամի** չափով: Միջին ժամկետ հեռանկարում նախատեսվում է ապահովել հարկային եկամուտներ և պետական տուրք/ՀՆԱ հարաբերության աճ, ինչպես նաև շարունակել ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցության աստիճանական նվազեցումը՝ վերջինիս մեծությունը 2006 և 2007 թվականներին համապատասխանաբար հասցնելով մինչև ՀՆԱ **2.0%-ը**:

Նշված պայմաններում դրական միտումները կշարունակվեն նաև պետական պարտքի բնագավառում: Ոչ արտոնյալ վարկերի արդեն իսկ վերաձևակերպված պայմաններում արտաքին պարտքի աճը էական ազդեցություն չի ունենա երկրի վճարունակության վրա:

## ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների համապատասխանությունը 2005-2007թթ. ՄԺԾԾ-ին

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող վերը նշված հարկաբյուջետային ցուցանիշները ընդհանուր առմամբ համահունչ են երկրաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ ՀՀ 2005-2007թթ. ՄԺԾԾ հրապարակումից հետո անցած ժամանակա-

հատվածում տնտեսության զարգացման ձևավորված միտումները անհրաժեշտ դարձրեցին ՄԺԾՆ ցուցանիշներում որոշակի ճշգրտումների կատարումը (օրինակ ՀՆԱ-ի 2004 թվականի իրական աճի տարեկան ներկայիս սպասումները գերազանցում են ՄԺԾՆ-ով ծրագրավորված ցուցանիշը **1.0 տոկոսային կետով** և որն իր ազդեցությունն ունեցավ նաև 2005 թվականի ՀՆԱ-ի ինչպես անվանական մեծության այնպես էլ իրական աճի ցուցանիշների կանխատեսման վրա): Հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ 2005 թվականին հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերությունը **0.1 տոկոսային կետով** զիջում է ՄԺԾՆ-ով սահմանված համապատասխան ցուցանիշին, այնուամենայնիվ նախագծով պահպանվել է ՄԺԾՆ-ով սահմանված նշված ցուցանիշի շարունակական աճի միտումը՝ 2004 թվականի սպասողականի նկատմամբ 2005 թվականին նախատեսված է **0.6 տոկոսային կետով** աճ: Արդյունքում ՄԺԾՆ-ով նախատեսվածի դիմաց ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր գումարը գերազանցում է ՄԺԾՆ-ով 2005 թվականի համար սահմանված համապատասխան ցուցանիշը **3.2 %-ով կամ 9.6 մլրդ դրամով**:

ՄԺԾՆ-ով սահմանվածի դիմաց շուրջ **0.1 մլրդ դրամով կամ 3.3%-ով** ավելի է նախատեսվել ոչ հարկային եկամուտների ընդհանուր գումարը: Այս տարբերությունը կանխատեսման մեթոդաբանության անփոփոխության պայմաններում, պայմանավորված է առանձին եկամտատեսակների գծով 2004 թվականին արձանագրված եկամուտների հավաքագրման միտումների, ինչպես նաև բյուջետային մուտքերի ստացման կանխատեսված սցենարի փոփոխմամբ: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի 2004 թվականի ծախսերի և մասհանումների նկատմամբ եկամուտների գերազանցումից պետական բյուջե փոխանցման ենթակա 2005 թվականի մուտքերը ՄԺԾՆ-ով նախատեսվել են **1.0 մլրդ դրամի** չափով: Ֆինանսական շուկայի ընթացիկ տարվա զարգացումները ցույց են տալիս, որ 2004 թվականի գործունեության արդյունքներով կենտրոնական բանկի շահույթ չի ձևավորվի և Նախագծում այս եկամտատեսակի գծով 2005 թվականի համար մուտքեր չեն ծրագրվել: Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով ՄԺԾՆ-ով նախատեսվել է **350 մլն դրամ**: Նախագծով այս եկամտատեսակի գծով ծրագրվել է **947.5 մլն դրամ**: Լրացուցիչ մուտքերն ակնկալվում է ստանալ գանձապետական միասնական հաշվի օրական մնացորդի մի մասը ՀՀ ԿԲ-ում որպես ժամկետային ավանդ ներդնելու արդյունքում:

Կապիտալի գործառնություններից եկամուտների մասով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող և ՄԺԾՆ-ով նախատեսված գումարները տարբերվում են **5.2 մլրդ դրամով** կամ մոտ **17 անգամ**: Այս կտրուկ տարբերությունը հիմնականում պայմանավորված է պետական սեփականություն համարվող հողերի օտարումից Երևան քաղաքի մասով ՄԺԾՆ-ով նախատեսված 0.3 մլրդ դրամի դիմաց Նախագծում լրացուցիչ **4.9 մլրդ դրամի** չափով մուտքեր ներառելու հանգամանքով: Բացի այդ, Նախագծով ՄԺԾՆ-ով նախատեսվածից ավելի գումարներ են ծրագրված նաև բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող շենքերի և շինությունների 2005 թվականին օտարումից մուտքերի մասով՝ **0.3 մլրդ դրամի** չափով: Այս լրացուցիչ մուտքերը ծրագրվել են բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող շենքերի և շինությունների 2005 թվականին օտարումից:

ՄԺԾԾ-ով նախատեսվածի դիմաց ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով **13.2 %-ով կամ 1.2 մլրդ դրամով** ավելի են ծրագրավորվել պաշտոնական տրանսֆերտների գումարները: Այս դեպքում տարբերությունը պայմանավորված է ինչպես ստացվելիք պաշտոնական տրանսֆերտների կազմում տեղի ունեցած փոփոխություններով, այնպես էլ հաշվարկման հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի փոխարժեքների փոփոխությամբ (նշված ցուցանիշների ՄԺԾԾ-ում կիրառված համապատասխանաբար 568.6 դրամի և 653.9 դրամի փոխարեն Նախագծում օգտագործվել է 535.0 դրամը և 615.25 դրամը):

Արդյունքում ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային եկամուտների ընդհանուր ծավալը 2005-2007թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվածի դիմաց ավելացել է **16.1 մլրդ դրամով կամ 5.2%-ով** (կազմելով ՀՆԱ-ի **16.2%-ը՝ ՄԺԾԾ-ով ծրագրավորված 16.0 %-ի** դիմաց):

Վերը նշված փոփոխությունները ազդեցություն ունեցան 2005 թվականի բյուջետային ծախսերի և դեֆիցիտի մեծությունների վրա: Մասնավորապես բյուջետային ծախսերի ընդհանուր գումարը 2005-2007թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավելացավ շուրջ **20.0 մլրդ դրամով կամ 5.6%-ով** (կազմելով ՀՆԱ-ի **18.5%-ը՝ ՄԺԾԾ-ով ծրագրավորված 18.2%-ի** դիմաց), իսկ դեֆիցիտը անվանական մեծությամբ աճեց շուրջ **3.9 մլրդ դրամով կամ 8.9 %-ով** (կազմելով ՀՆԱ-ի **2.34%-ը՝ ՄԺԾԾ-ով ծրագրավորված 2.2%-ի** դիմաց):

*Աղյուսակ 1. 2 ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի նախագծի ամփոփ ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ 2004-2006թթ. ՄԺԾԾ-ին (մլրդ դրամով)*

	2005թ. ցուցանիշները ըստ ՀՀ 2005-2007թթ. ՄԺԾԾ-ի	2005թ. ցուցանիշները ըստ ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծի	ՀՀ 2005թ. պետական բյուջեի նախագծի ցուցանիշների շեղումը ՀՀ 2005-2007թթ. ՄԺԾԾ-ից
1. Ընդամենը եկամուտներ	311.8	327.9	+16.1
2. Ընդամենը ծախսեր	355.4	375.4	+20.0
3. Դեֆիցիտ	43.6	47.5	+ 3.9
4. Պետական պարտք (մլն ԱՄՆ դոլար)	1253.1	1280.6	+ 27.5